ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 02/2021

ՌԱԶՄԻԿ ԹԵՎՈՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 18 հոկտեմբերի, 2021 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Լ. Ալեքսանյանի, Ա. Փաշինյանի, Ն. Համբարձումյանի, Մ. Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով Ռազմիկ Թևոնյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2021 թվականի հունիսի 18-ին հարուցված թիվ 02/2021 վարույթի նյութերը.

պարզեց.

I. Նախապատմություն

1. 2021 թվականի մայիսի 28-ին «Հետք» էլեկտրոնային լրատվամիջոցի «Արարատի մարզպետը շարունակում է մնալ «Երասխի գինու գործարան» ՍՊԸ-ի տնօրենը» վերտառությամբ (https://hetq.am/hy/article/131475) հրապարակման տեղեկությունների համաձայն՝ «Ռազմիկ Թևոնյանը Արարատի մարզպետի պաշտոնը ստանձնել է 2020թ. դեկտեմբերի 10-ին: Մարզպետ նշանակվեուց առաջ Ռ. Թևոնյանը եղել է «Երասխի գինու գործարան» ՍՊԸ-ի տնօրենը, սակայն պետական ռեգիստրի տվյալների համաձայն՝ մարզպետը դեռ

շարունակում է լինել գործարանի տնօրեն, թեև օրենքը համատեղելիությունն արգելում է: Ի դեպ, գործարանի տնօրենի պաշտոնը Արարատի ներկայիս մարզպետը զբաղեցնում է 2004թ-ից (մեջբերումը հրապարակումից)»:

Հրապարակմամբ նշված տեղեկությունների ուսումնասիրությամբ վեր են հանվել նաև հետևյալ փաստական տվյալները.

1) ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 1998-Ա որոշմամբ Ռազմիկ Թևոնյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի պաշտոնում (https://www.e-gov.am/gov-decrees/item/35226/):

2) ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության (այսուհետ՝ Պետական ռեգիստր) պետական միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Ռազմիկ Թևոնյանը 2004 թվականի օգոստոսի 12-ից մինչև 2021 թվականի հունիսի 8-ը (փոփոխության ամսաթիվ) գրանցված է եղել որպես «Երասխի գինու գործարան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) գործադիր մարմնի ղեկավար:

3) Ընկերության միակ մասնակից Մարտիկ Թևոնյանի 2021 թվականի հունիսի 4-ի թիվ 1/21 որոշման համաձայն՝ դադարեցվել են Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի (տնօրեն) Ռազմիկ Թևոնյանի լիազորությունները:

2. 2021 թվականի հունիսի 18-ին Հանձնաժողովը կայացրել է անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին թիվ 02/2021 որոշումը:

3. 2021 թվականի հունիսի 21-ին անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը սուրհանդակային ծառայության միջոցով ուղարկել է Ռազմիկ Թևոնյանին՝ միաժամանակ առաջարկելով ներկայացնել պարզաբանում քննարկվող հարցի առնչությամբ և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր:

4. 2021 թվականի հուլիսի 2-ին Հանձնաժողովում ստացված գրությամբ Ռազմիկ Թևոնյանը ներկայացրել է պարզաբանում հարուցված վարույթի փաստական հանգամանքների վերաբերյալ: Գրությանը կից ներկայացվել է նաև 10.12.2020 թվականի Ընկերության միակ մասնակցի թիվ 1/20 որոշումը Ընկերության գործադիր մարմնի ղեկավար Ռազմիկ Թևոնյանի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ:

1) վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտ, որում հայտի ներկայացման ամսաթիվ նշված չէ:

2) 2021 թվականի հունիսի 4-ի Ընկերության միակ մասնակցի թիվ 1/20 որոշումը Ընկերության գործադիր մարմնի ղեկավար Ռազմիկ Թևոնյանի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ (նույն որոշման մեջ առկա է «10.12.2020թ.-ից» գրառումը):

3) 2020 թվականի դեկտեմբերի 10-ի Ընկերության միակ մասնակցի թիվ 2/20 որոշումը Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի պարտականությունների կատարումը ժամանակավորապես փոխտնօրեն Նարինե Թևոնյանին հանձնարարելու վերաբերյալ:

5. Հանձնաժողովը գրավոր դիմել և վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներ է ստացել Պետական ռեգիստրից, Կադաստրի կոմիտեից և Պետական եկամուտների կոմիտեից:

6. 2021 թվականի հուլիսի 27-ին Ընկերությանը հասցեագրված գրությամբ Հանձնաժողովը հայցել է տրամադրել Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնից Ռազմիկ Թևոնյանի ազատման մասին անհատական իրավական ակտի, ազատման հիմք հանդիսացող փաստաթղթի պատճենները, ինչպես նաև ազատման և աշխատանքի ընդունման վերաբերյալ վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտը Պետական եկամուտների կոմիտե ներկայացնելու ժամկետի վերաբերյալ տվյալը:

7. 2021 թվականի օգոստոսի 9-ին Հանձնաժողովում ստացված գրությամբ Ընկերության տնօրենը հայտնել է, որ Ընկերության գործադիր մարմնի ղեկավար Ռազմիկ Թևոնյանը պաշտոնից ազատվել է 10.12.2020 թվականին՝ այլ աշխատանքի անցնելու հիմքով: Վերջինիս վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների հայտը Պետական եկամուտների կոմիտե ներկայացվել է 17.12.2020 թվականին: Հայտնել է նաև, մեջբերում. «Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնից Ռազմիկ Թևոնյանի ազատման վերաբերյալ՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն հայտնվել է ուշացումով՝ 04.06.2021թ. ինձ Ընկերության գործադիր մարմնի նոր ղեկավար նշանակվելուց հետո որոշումը 08.06.2021թ-ին անձամբ առձեռն եմ տարել ներկայացրել»:

Գրությանը կից ներկայացրել է՝

1) 2020 թվականի դեկտեմբերի 10-ի Ընկերության միակ մասնակցի թիվ 1/20 որոշումը Ընկերության գործադիր մարմնի ղեկավար Ռազմիկ Թևոնյանի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ, այդ թվում՝ 10.12.2020 թվականի թիվ 26 հրամանը տնօրենին աշխատանքից ազատելու մասին, որում, որպես հիմք նշված է 10.12.2020 թվականի Ընկերության միակ մասնակցի թիվ 1/20 որոշումը:

2) 2020 թվականի դեկտեմբերի 10-ի Ռազմիկ Թևոնյանի դիմումը՝ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնից ազատելու վերաբերյալ:

3) Ռազմիկ Թևոնյանի համար Պետական եկամուտների կոմիտե ներկայացված (date: 2020.12.17 13:59:20 AMT) վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտը, որի «Ավարտ» սյունակում առկա է նշում՝ 10/12/2020:

4) 2021 թվականի հունիսի 4-ին Ընկերության միակ մասնակցի թիվ 1/20 որոշումը Ընկերության գործադիր մարմնի ղեկավար Ռազմիկ Թևոնյանի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ (ներկայացված որոշման մեջ առկա է «10.12.2020թ.-ից» գրառումը):

5) Ընկերության վերաբերյալ պետական միասնական գրանցամատյանից քաղվածք՝ առ 2021-06-08, որում, որպես գործադիր մարմնի ղեկավար, նշված է Դավիթ Դավթյան:

8. 2021 թվականի օգոստոսի 26-ին Ընկերությանը հասցեագրված գրությամբ Հանձնաժողովը հայցել է տրամադրել Ընկերության՝ գրությամբ նշված աշխատողների (2020 թվականի դեկտեմբերի 10-ից մինչև 2021 թվականի հունիսի 4-ն ընկած ժամանակահատվածում) աշխատանքի ընդունման և ազատման մասին անհատական իրավական ակտերի (հրամանների), ինչպես նաև աշխատանքային պայմանագրերի պատճենները:

9. 2021 թվականի սեպտեմբերի 9-ին, ժամը 15:00-ին, Հանձնաժողովում նշանակվել են վարչական լսումներ, որն իրականացվել է Ռազմիկ Թևոնյանի ներկայացուցիչ՝ փաստաբան Ալբերտ Կանդալյանի (այսուհետ՝ Ներկայացուցիչ) մասնակցությամբ:

10. 2021 թվականի սեպտեմբերի 10-ին Հանձնաժողովում ստացվել է ներկայացուցչի գրությունը՝ լսումների ընթացքում քննարկված հարցերի վերաբերյալ:

11. 2021 թվականի սեպտեմբերի 14-ին Հանձնաժողովում ստացվել է Ընկերության տնօրենի գրությունը, որին կից ներկայացվել է Հանձնաժողովի կողմից 2021 թվականի օգոստոսի 26-ին Ընկերությանը հասցեագրված գրությամբ նշված աշխատողների աշխատանքի ընդունման և ազատման մասին հրամանների և աշխատանքային պայմանագրերի պատճենները:

12. 2021 թվականի սեպտեմբերի 14-ին Հանձնաժողովը ՀՀ գլխավոր դատախազություն է հասցեագրել գրություն՝ վարույթում առկա բովանդակային տարբերություն ունեցող նյութերին (Պետական ռեգիստր ներկայացված՝ Ընկերության միակ մասնակցի 04.06.2021 թվականի թիվ 1/21 որոշման և Ռազմիկ Թևոնյանի, ինչպես նաև Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված «Երասխի գինու գործարան» ՍՊ ընկերության միակ մասնակցի 04.06.2021 թվականի թիվ 1/21 որոշումներ) քրեադատավարական ընթացակարգերի շրջանակում գնահատելու, համապատասխան հիմքերի առկայության դեպքում ընթացք տալու նպատակով:

13. 2021 թվականի սեպտեմբերի 14-ին Հանձնաժողովը (կազմով՝ Հ. Հարությունյանի, Ն. Համբարձումյանի, Լ. Ալեքսանյանի) ընդունել է անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցված թիվ 02/2021 վարույթը կասեցնելու մասին որոշումը՝ հաշվի առնելով այն, որ Հանձնաժողովի մոտ ձևավորվել էր հիմնավոր կասկած առ այն, որ ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկված՝ 12-րդ կետում նշված վարույթի նյութերը չեն կազմվել 10.12.2020 թվականին, այլ կազմվել են միայն Հանձնաժողովում հարուցված վարույթից հետո՝ նպատակ ունենալով չեզոքացնել անհամատեղելիության պահանջների հնարավոր խախտումները:

14. 2021 թվականի հոկտեմբերի 11-ին Հանձնաժողովում ստացվել է ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության կոռուպցիոն և տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչությունում առերևույթ կեղծ փաստաթուղթ պատրաստելու և օգտագործելու վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2021 թվականի սեպտեմբեի 29-ի որոշումը:

15. 2021 թվականի հոկտեմբերի 15-ին Հանձնաժողովը, հիմք ընդունելով քրեական գործ հարուցումը մերժելու մասին որոշումը և հաշվի առնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված իրավակարգավորումը, վերսկսել է կասեցված թիվ 02/2021 վարույթը:

II. ***Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ***

1. 2021 թվականի հուլիսի 2-ին Հանձնաժողովում ստացված գրությամբ Ռազմիկ Թևոնյանը ներկայացրել է պարզաբանում առ այն, որ Ընկերության միակ մասնակից Մարտիկ Թևոնյանի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 1/20 որոշմամբ դադարեցվել են Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունները, իսկ նույն օրվա թիվ 2/20 որոշմամբ Ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես հանձնարարվել է փոխտնօրեն Նարինե Թևոնյանին: Ազատվելուց հետո հարկային հաշվետվությունում նույնպես ամրագրվել է այդ մասին՝ մասնավորապես, վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտի 4-րդ բաժնի 1-ին կետում աշխատանքային հարաբերություններ սյունակում ամրագրված է սկիզբ՝ 01/07/1991, ավարտ՝ 10/12/2020:

Պետական միասնական գրանցամատյանում առկա տվյալների անհամապատասխանության մասով պարզաբանել է, որ հավանաբար իր լիազորությունների դադարեցման վերաբերյալ տվյալներն ուշ են հայտնվել Պետական ռեգիստրին, սակայն ազատման վերաբերյալ թիվ 1/20 որոշումը կազմվել է 2020 թվականի դեկտեմբերի 10-ին, իսկ 1/21 որոշումը՝ 2021 թվականի հունիսի 4-ին, որի 1-ին կետով հղում է կատարվել ազատման հանգամանքին, թեև դրանում նույնպես նշված է որպես լիազորությունների դադարեցման ժամանակահատված՝ 2020թվականի դեկտեմբերի 10-ը:

2. 2021 թվականի սեպտեմբերի 9-ին Հանձնաժողովում իրականացված վարչական լսումների ընթացքում, ինչպես նաև 2021 թվականի սեպտեմբերի 10-ին Հանձնաժողովին ներկայացված գրությամբ Ներկայացուցիչը դիրքորոշում է ներկայացրել առ այն, որ իր վստահորդը փաստացի պատշաճ կատարել է իր

պարտավորությունները՝ գրել է Ընկերության տնօրենի պաշտոնից ազատման մասին դիմում մինչև պաշտոնը ստանձնելը, սակայն անձամբ չի կրել պարտականություն Պետական ռեգիստում կատարել փոփոխության մասին գրանցում:

III. Անհամապատասխանության պահանջների առերևույթ խախտման վարույթի շրջանակներում պարզված տեղեկություններ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից, վարույթի մասնակիցներից ստացված տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

1. Ռազմիկ Թևոնյանի համար 2021 թվականի հունվար ամսվա և դրան հաջորդող հաշվետու ժամանակաշրջաններին աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ չեն հաշվարկվել, վերջինիս անունից 2021 թվականի հունվարի 10-ից հետո հարկային հաշվարկներ չեն ստորագրվել և ներկայացվել, ինչպես նաև իր անունից ստորագրված լիազորագրեր հարկային գործում առկա չեն: (հիմք՝ Պետական եկամուտների կոմիտեի 22.07.2021 թվականի գրություն):

2. 2020-2021 թվականներին Ընկերությամբ անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում անշարժ գույքի նկատմամբ սեփականության, ինչպես նաև օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումներ կատարված չեն (հիմք՝ Կադաստրի կոմիտեի 23.07.2021 թվականի գրություն):

3. 2020 թվականի դեկտեմբերի 17-ին Պետական եկամուտների կոմիտե է ներկայացվել վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի աշխատանքից ազատման մասին հայտը (հիմք՝ Պետական եկամուտների կոմիտեի 02.08.2021 թվականի գրություն):

4. 2021 թվականի հունիսի 4-ին Դավիթ Դավթյանը նշանակվել է Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնում, նույն օրը վերջինս Պետական ռեգիստր է ներկայացրել Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության մասին գրառումը պետական միասնական գրանցամատյանում կատարելու մասին դիմում՝ փոփոխության համար հիմք հանդիսացած փաստաթղթերով, այդ թվում՝ 2021 թվականի հունիսի 4-ին Ընկերության միակ մասնակցի թիվ 1/21 որոշումը՝ Ընկերության գործադիր մարմնի ղեկավար Ռազմիկ Թևոնյանի լիազորությունները

դադարեցնելու և իրեն գործադիր մարմնի ղեկավար նշանակելու վերաբերյալ (հիմք՝ Պետական ռեգիստրի 02.08.2021 թվականի գրություն):

5. Պետական ռեգիստր ներկայացված՝ Ընկերության միակ մասնակցի 04.06.2021 թվականի թիվ 1/21 որոշման, ինչպես նաև Ռազմիկ Թևոնյանի և Ընկերության տնօրեն Դավիթ Դավթյանի կողմից Հանձնաժողով ներկայացված Ընկերության միակ մասնակցի 04.06.2021 թվականի թիվ 1/21 որոշումների միջև առկա են բովանդակային տարբերություններ՝ «10.12.2020թ.-ից» գրառման առումով (հիմք՝ Ռազմիկ Թևոնյանի 02.07.2021 թվականի գրավոր պարզաբանում, Ընկերության 09.08.2021 թվականի և Պետական ռեգիստրի 02.08.2021 թվականի գրություններ):

6. 2020 թվականի դեկտեմբերի 10-ից մինչև 2021 թվականի հունիսի 4-ն ընկած ժամանակահատվածում Ընկերությունում աշխատանքի ընդունված և ազատված անձանց՝ աշխատանքի ընդունման և ազատման մասին հրամանները և աշխատանքային պայմանագրերը ստորագրվել են Ընկերության տնօրենի տեղակալ Նարինե Թևոնյանի կողմից (հիմք՝ Ընկերության 14.09.2021 թվականի գրություն):

7. Վարույթի ընթացքում ստացված՝ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունները դադարեցնելու մասին Ընկերության միակ մասնակցի որոշումների միջև բովանդակային տարբերությունների կապակցությամբ Հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի գրության հիման վրա ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության կոռուպցիոն և տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչությունում առերևույթ կեղծ փաստաթուղթ պատրաստելու և օգտագործելու դեպքերի առթիվ նյութերի նախապատրաստման ընթացքում Ընկերության մասնակից Մարտիկ Թևոնյանը բացատրություն է տվել այն մասին, որ Ռազմիկ Թևոնյանը 10.12.2020 թվականին նշանակվել է ՀՀ Արարատի մարպետ և նույն օրն իր դիմումի համաձայն ազատվել է գործարանի տնօրենի պաշտոնից, 10.12.2020 թվականից տնօրենի պաշտոնակատար է նշանակվել փոխտնօրեն Նարինե Թևոնյանը, իսկ 04.06.2021 թվականին գործարանի տնօրեն է նշանակվել Դավիթ Դավթյանը: Նույնաբովանդակ բացատրություններ են ներկայացրել նաև Ընկերության փոխտնօրեն Նարինե Թևոնյանը, հաշվապահ Նորիկ Ասլանյանը և տնօրեն Դավիթ Դավթյանը (հիմք՝ 2021 թվականի սեպտեմբերի 29-ի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում):

Մարզպետի գործունեությանն առնչվող տեղեկություններ

Արարատի մարզպետարանի պաշտոնական կայքից (http://ararat.mtad.am/structure/bio/906/) ստացված տվյալների համաձայն Ռազմիկ Թևոնյանը 2020 թվականի դեկտեմբերի 10-ից զբաղեցրել է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի պաշտոնը:

IV. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

1. ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 1998-Ա որոշմամբ Ռազմիկ Թևոնյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի պաշտոնում:

2. 2020 թվականի դեկտեմբերի 10-ին Ընկերության գործադիր մարմնի ղեկավար Ռազմիկ Թևոնյանը այլ աշխատանքի անցնելու հիմքով պաշտոնից ազատման դիմում է ներկայացրել:

3. 2020 թվականի դեկտեմբերի 17-ին Ռազմիկ Թևոնյանի վերաբերյալ վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների հայտը ներկայացվել է Պետական եկամուտների կոմիտե: Հայտում առկա տվյալների համաձայն՝ Ռազմիկ Թևոնյանի աշխատանքային հարաբերությունների ավարտի ամսաթիվ է նշված՝ 2020 թվականի դեկտեմբերի 10-ը:

4. 2021 թվականի հունիսի 4-ին Դավիթ Դավթյանը նշանակվել է Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնում: 2020 թվականի դեկտեմբերի 10-ից մինչ վերջինիս կողմից պաշտոնի նշանակումը Ընկերությունում աշխատանքի ընդունված և ազատված անձանց համար գործատու է հանդիսացել Ընկերության տնօրենի տեղակալ Նարինե Թևոնյանը:

5. 2021 թվականի հունիսի 4-ին Ընկերության տնօրեն Դավիթ Դավթյանի կողմից Պետական ռեգիստր է ներկայացվել Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության մասին գրառումը պետական միասնական գրանցամատյանում կատարելու մասին դիմում՝ փոփոխության հիմք հանդիսացող փաստաթղթերով (այդ թվում՝ 2021 թվականի հունիսի 4-ին Ընկերության միակ մասնակցի թիվ 1/21 որոշումը):

6. Վարույթի ընթացքում ստացված՝ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունները դադարեցնելու մասին Ընկերության միակ մասնակցի որոշումների միջև բովանդակային տարբերությունների կապակցությամբ Հանձնաժողովի գրության հիման վրա ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության կոռուպցիոն և տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչությունում առերևույթ կեղծ փաստաթուղթ պատրաստելու և օգտագործելու վերաբերյալ նախապատրաստված նյութերով 2021 թվականի սեպտեմբերի 29-ին ընդունված որոշմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

V. Անհամատեղելիության պահանջին առաջադրվող օրենսդրական կարգավորումներ

1. «Տարածքային կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մարզպետի վրա տարածվում են Կառավարության անդամին ներկայացվող պահանջները և անհամատեղելիության պահանջները:

2. Սահմանադրության 148-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կառավարության անդամի վրա տարածվում են պատգամավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները: Նրա համար օրենքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:

3. Սահմանադրության 95-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

4. «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի գործողությունը տարածվում է հանրային իշխանության մարմինների վրա, ինչպես նաև հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վրա:

5. Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային: Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կանոնակարգման համաձայն՝ մարզպետի պաշտոնը հանդիսանում է պետական վարչական պաշտոն:

6. Օրենքի 31-րդ հոդվածով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանվել են անհամատեղելիության պահանջներ: Նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը:

7. «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում են առևտրային կազմակերպությունում պաշտոն հասկացությունները՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով առևտրային կազմակերպությունում (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի հիման վրա ստեղծված կազմակերպությունների) պաշտոն զբաղեցնելու ներքո հասկացվում է՝

1) առևտրային կազմակերպության կառավարման մարմնում ընդգրկված լինելը.

2) առևտրային կազմակերպությունում ցանկացած այլ պաշտոն զբաղեցնելը.

3) առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը.

4) սույն մասի 1-3-րդ կետերում նշված դեպքերից բացի, որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության նախագահի, պատգամավորի, Կառավարության անդամի,

ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի) կամ հանրային ծառայողը կարող է ընդգրկվել 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ առևտրային կազմակերպության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհուրդ) կազմում, եթե դա ուղղակիորեն առնչվում է իր պաշտոնավարման ոլորտի քաղաքականության իրականացման հետ՝ առանց վարձատրության կամ որևէ այլ ձևով փոխհատուցում ստանալու կամ հանրային պաշտոն չզբաղեցնող անձանց կամ ոչ հանրային ծառայողների համար նախատեսված սոցիալական երաշխիքներից կամ այլ ծառայություններից կամ արտոնություններից օգտվելու իրավունքի:

8. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով սահմանված կանոնակարգման համաձայն՝ ընդհանուր ժողովի բացառիկ լիազորությունն է՝ ընկերության գործադիր մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցում:

9. «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված իրավանորմի համաձայն՝գործատուն (հարկային գործակալը) գրանցման հայտ է ներկայացնում՝ վարձու աշխատողին աշխատանքի ընդունելու, վարձու աշխատողին աշխատանքից ազատելու (օրենքով սահմանված կարգով աշխատանքային հարաբերությունները դադարելու) դեպքում:

10. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձի փոփոխությունների գրանցման համար դիմելու իրավունք ունեն՝

1) իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը կամ նրա պաշտոնակատարը (օրենքով նախատեսված դեպքերում՝ ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձը).

2) օրենսդրությամբ նախատեսված ցանկացած այլ անձ.

3) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված անձանց կողմից լիազորված ցանկացած գործունակ անձ:

Նույն օրենքի 39-րդ հոդվածով սահմանված կանոնակարգման համաձայն՝ փոփոխությունների պետական գրանցման համար դիմողը գործակալություն է ներկայացնում՝ դիմում, իսկ 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը գործակալություն ներկայացնելուց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում գործակալությունը պետք է կատարի համապատասխան փոփոխության պետական գրանցումը:

VI. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը.

1. Սահմանադրությամբ ամրագրված կառավարության անդամին («Տարածքային կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված իրավանորմի ուժով՝ նաև մարզպետին) ներկայացվող պահանջները ենթադրում են, որ Կառավարության անդամը չի կարող զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ որևէ պաշտոն առևտրային կազմակերպություններում: Սահմանադրության նշված սահմանափակումից ենթադրվում է, որ կառավարության անդամի պաշտոնը նրա աշխատանքային գործունեության միակ տեսակն է, աշխատում է պրոֆեսիոնալ հիմունքներով և դրան զուգահեռ նա չի կարող զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված այլ պաշտոն: Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում իր պարտականությունների հետ չկապված պաշտոն զբաղեցնելու՝ կառավարության անդամի նկատմամբ նախատեսված արգելքը բխում է իշխանությունների բաժանման սկզբունքից և սահմանադրական այն դրույթից, որի համաձայն նշված մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով, ինչպես նաև մեկնաբանվող հոդվածի բովանդակությունից, ըստ որի կառավարության անդամը չի կարող կատարել այլ վճարովի աշխատանք: (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, 2010, էջ 868):

2. Անհամատեղելիության պահանջներ սահմանող օրենսդրական կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ Կառավարության անդամի պաշտոն զբաղեցնելու ընթացքում ***առևտրային կազմակերպություններում*** պաշտոն

զբաղեցնելու արգելքը բացարձակ է, ինչը ենթադրում է, որ անձը պետք է զերծ մնա հնարավոր այնպիսի բոլոր գործողություններից, որոնց շրջանակում կարող է ձևավորվել այնպիսի վարքագիծ, որը կարող է որակվել որպես պետական պաշտոնին զուգահեռ անձի մասնակցության ու ազդեցության պահպանում այլ պաշտոնում՝ մասնակցություն ունենալով կամ այլ կերպ ներգրավված լինելով առևտրային կազմակերպության կողմից կայացվող որոշումներում, ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթների իրականացմանը:

3. Անհամատեղելիության պահանջների բովանդակային նշանակությունը հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար լրացուցիչ երաշխիք սահմանելն է, որի արդյունքում վերջիններս հնարավորություն կունենան պաշտոնի նշանակվելուց կամ ընտրվելուց հետո մեկամսյա ժամկետում վերացնելու իրենց զբաղեցրած պաշտոնի հետ անհամատեղելի այլ գործունեությունը, դրանով իսկ բացառելով կամ նվազագույնի հասցնելով հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց մոտ շահերի բախման իրավիճակները:

4. Իրավաբանական անձանց պետական գրանցման, ինչպես նաև պետական միասնական գրանցամատյանում գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրական նորմերի համաձայն՝ գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունները փաստացի դադարեցրած ֆիզիկական անձը չի հանդիսանում իր՝ պաշտոնից ազատման կապակցությամբ Պետական ռեգիստր տվյալներ ներկայացնելու և միասնական գրանցամատյանում համապասխան գրառումն ապահովելու պարտականություն կրող սուբյեկտ:

Իրավական վերոնշյալ կարգավորումների լույսի ներքո գնահատելով սույն վարույթում էական նշանակություն ունեցող փաստերը, բազմակողմանի հետազոտելով ձեռքբերված ապացույցները՝ Հանձնաժողովը փաստում է, որ Ռազմիկ Թևոնյանը, ստանձնելով հանրային պաշտոն, կատարել է անհամատեղելիության պահանջներ սահմանող իրավանորմերի պահպանմանն ուղղված անհրաժեշտ գործողություններ, այն է՝ դիմում է ներկայացրել իր պաշտոնի հետ անհամատեղելի պաշտոն հանդիսացող առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնից ազատվելու համար, արդյունքում Ընկերության միակ մասնակցի որոշմամբ, որպես Ընկերության գործադիր մարմնի ղեկավար, դադարեցվել են վերջինիս լիազորությունները: Վարույթի ընթացքում ձեռք բերված փաստական

տվյալներով հաստատվում է նաև Ռազմիկ Թևոյանի՝ որպես վարձու աշխատողի, Ընկերության տնօրենի պաշտոնից ազատված լինելու հանգամանքն առ այն, որ վերջինիս համար Պետական եկամուտների կոմիտե է ներկայացվել աշխատանքային հարաբերությունների դադարեցման մասին հայտ, ինչպես նաև նշված ժամանակահատվածում չեն հաշվարկվել և վճարվել աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ:

Նշենք նաև, որ Ռազմիկ Թևոնյանի կողմից Ընկերության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելու հանգամանքը պարզելուն ուղղված Հանձնաժողովի գործողությունների արդյունքում ձեռք բերված նյութերում առկա չէ որևէ փաստական հիմք, որով կհաստատվեր Ռազմիկ Թևոնյանի կողմից Ընկերության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելու հանգամանքը: Մասնավորապես, պետական մարմիններից և կազմակերպություններից ձեռք բերված տվյալներով Հանձնաժողովը հավաստիանում է, որ Ռազմիկ Թևոնյանի անունից հարկային հաշվարկներ չեն ստորագրվել կամ ներկայացվել, առկա չեն վերջինիս կողմից Ընկերության անունից հանդես գալու համար տրված լիազորագրեր, կնքված անշարժ գույքի հետ կապված գործարքներ, աշխատանքային պայմանագրեր, ինչպես նաև ընդունված աշխատանքից ազատման կամ ընդունման մասին անհատական իրավական ակտեր (հրամաններ):

Սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների համադրումից և վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից Հանձնաժողովը ***եզրահանգում է,*** որ *սույն գործով քննարկված փաստական հանգամանքների շրջանակներում* Ռազմիկ Թևոնյանն իր գործողություններով պահպանել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

Ռազմիկ Թևոնյանի կողմից չեն խախտվել «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ